

<p><i>Համարը</i> <i>Տիպը</i> Կոնվենցիա <i>Սկզբնաղբյուրը</i> ՀՀԱԳՆՊՏ 11.02.08./9(17) <i>Ընդունող մարմինը</i> Միավորված Ազգերի Կազմակերպություն (ՄԱԿ) <i>Ստորագրող մարմինը</i> <i>Վավերացնող մարմինը</i> <i>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</i> 01.06.2007</p>	<p><i>Տեսակը</i> Մայր <i>Կարգավիճակը</i> Գործում է <i>Ընդունման վայրը</i> Նյու Յորք <i>Ընդունման ամսաթիվը</i> <i>Ստորագրման ամսաթիվը</i> <i>Վավերացման ամսաթիվը</i> <i>Ուժը կորցնելու ամսաթիվը</i></p>
---	--

ԿՈՆՎԵՆՑԻԱ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մույն Կոնվենցիան ստորագրող Պետությունները,
ընդունելով, որ երեխան իր անձի լիարժեք և ներդաշնակ զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան շրջապատում՝ երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում,
հիշեցնելով, որ յուրաքանչյուր Պետություն, որպես առաջնահերթ խնդիր, պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկի, որպեսզի երեխայի խնամքն իրականացնի նրա հարազատ ընտանիքը,
ընդունելով, որ օտարերկրյա որդեգրումը կարող է առավելություններ տրամադրել երեխային, որի համար հնարավոր չէ գտնել հարմար ընտանիք նրա ծագման Պետությունում,
համոզված լինելով այնպիսի միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մեջ, որ օտարերկրյա որդեգրումը պետք է կատարվի այնպես, որ հաշվի առնվեն երեխայի լավագույն շահերը՝ նրա հիմնական իրավունքները հարգելով և երեխաների առևանգումը, վաճառքը կամ նրանց առևտուրը կանխելու համար,
ցանկանալով ընդունել ընդհանուր դրույթներ այդ նպատակի համար, հաշվի առնելով միջազգային փաստաթղթերում ամրագրված սկզբունքները, մասնավորապես՝ Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի 1989 թ. նոյեմբերի 20-ի Կոնվենցիայում և երեխաների պաշտպանությանը և բարեկեցությանը վերաբերող՝ Սոցիալական և իրավական սկզբունքների մասին ՄԱԿ-ի Հռչակագրում և հատկապես Երեխաներին դաստիարակության տալու և ազգային ու միջազգային մակարդակներում նրանց որդեգրման մասին ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի 1986 թ. դեկտեմբերի 3-ի 41/85 Բանաձևում արտահայտված,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Գ Լ ՈՒ Խ I

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԸ

Հոդված 1

Մույն Կոնվենցիայի նպատակներն են.
ա) ստեղծել երաշխիքներ, որ օտարերկրյա որդեգրումն իրականացվի երեխայի լավագույն շահերից ելնելով և միջազգային իրավունքով ճանաչված նրա հիմնական իրավունքների պահպանումով.
բ) Պայմանավորվող պետությունների միջև ստեղծել համագործակցության համակարգ՝ այդպիսի երաշխիքների

հարգանքն ապահովելու համար և դրա միջոցով կանխելով երեխաների առևանգումը, վաճառքը կամ նրանց առևտուրը.

գ) ապահովել Կոնվենցիայի համաձայն իրականացված որդեգրման ճանաչումը Պայմանավորվող պետություններում:

Հոդված 2

1. Կոնվենցիան կիրառվում է, երբ մի Պայմանավորվող պետությունում (ծագման Պետություն) մշտապես բնակվող երեխան տեղափոխվել, տեղափոխվում կամ պետք է տեղափոխվի այլ Պայմանավորվող պետություն (ընդունող Պետություն)՝ կամ ծագման Պետությունում ամուսինների կամ ընդունող պետությունում սովորաբար բնակվող անձի կողմից նրա որդեգրումից հետո, կամ ընդունող Պետությունում կամ ծագման Պետությունում նման որդեգրման նպատակներով:

2. Կոնվենցիան տարածվում է միայն այն որդեգրումների վրա, որոնք մշտական կապ են ստեղծում ծնողների և երեխաների միջև:

Հոդված 3

Կոնվենցիան դադարում է կիրառվել, եթե 17-րդ հոդվածի «գ» ենթակետում նշված համաձայնությունը չի տրվել մինչև երեխայի 18 տարին լրանալը:

Գ Լ ՈՒ Խ II

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՐԴԵԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Հոդված 4

Կոնվենցիայի շրջանակներում որդեգրումը կատարվում է միայն այն դեպքում, եթե ծագման Պետության իրավասու մարմինները.

ա) հաստատել են, որ երեխան կարող է որդեգրվել.

բ) ծագման Պետությունում երեխայի տեղավորման հնարավորությունների պատշաճ քննարկումից հետո որոշել են, որ օտարերկրյա որդեգրումը բխում է երեխայի լավագույն շահերից.

գ) համոզվել են, որ՝

1) անձինք, հիմնարկներն ու մարմինները, որոնց համաձայնությունն անհրաժեշտ է որդեգրման համար, պատշաճ կերպով խորհրդատվություն են ստացել և տեղեկացված են եղել իրենց համաձայնության հետևանքների մասին, մասնավորապես՝ այն բանի առնչությամբ, թե արդյոք որդեգրումը կհանգեցնի երեխայի և նրա հարազատ ընտանիքի միջև իրավական կապի դադարեցման, թե ոչ.

2) նման անձինք, հիմնարկները և մարմինները կամավոր տվել են իրենց համաձայնությունը պահանջվող իրավական ձևով, որն արտահայտված կամ հաստատված է գրավոր.

3) համաձայնությունը չի տրվել և հետ չի վերցվել վարձատրության կամ որևէ տեսակի փոխհատուցման դիմաց.

4) որտեղ պահանջվում է, մոր համաձայնությունը տրվել է միայն երեխայի ծնվելուց հետո, և

դ) երեխայի տարիքը և հասունացման աստիճանը հաշվի առնելով՝ համոզվել են, որ՝

1) երեխայի հետ խորհրդակցել են և նրան պատշաճ կերպով տեղեկացրել են որդեգրման հետևանքների և որդեգրմանը նրա համաձայնության անհրաժեշտության մասին, եթե նման համաձայնություն պահանջվում է.

2) հաշվի են առնվել երեխայի ցանկությունը և կարծիքը.

3) որդեգրման վերաբերյալ երեխայի համաձայնությունը, եթե նման համաձայնությունը պահանջվում է, ստացվել է կամքի ազատ արտահայտմամբ՝ պատշաճ իրավական ձևով, որն արտահայտված կամ հաստատված է գրավոր, և

4) նման համաձայնությունը չի տրվել վարձատրության կամ որևէ տեսակի փոխհատուցման դիմաց:

Հոդված 5

Կոնվենցիայի շրջանակներում որդեգրումը կարող է կատարվել միայն այն դեպքում, եթե ընդունող Պետության իրավասու մարմինները.

- ա) որոշել են, որ որդեգրող ապագա ծնողները որդեգրման իրավունք ունեն և կարող են դիմել նման քայլի.
- բ) համոզվել են, որ որդեգրող ապագա ծնողները անհրաժեշտ չափով խորհրդատվություն են ստացել, և
- գ) որոշել են, որ երեխային թույլատրվում է կամ թույլատրվելու է մուտք գործել այդ Պետություն և մշտապես բնակվել այնտեղ:

Գ Լ ՈՒ Խ III

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդված 6

1. Պայմանավորվող պետությունը նշանակում է Կենտրոնական մարմին այն պարտականությունների կատարման համար, որոնք, Կոնվենցիայի համաձայն, դրված են նման մարմինների վրա:

2. Դաշնային Պետությունները, մեկից ավելի իրավական համակարգ կամ ինքնավար տարածքային միավորներ ունեցող Պետությունները կարող են նշանակել մեկից ավելի Կենտրոնական մարմիններ և հատկանշել նրանց գործառույթների տարածքային կամ անհատական շրջանակը: Երբ Պետությունը նշանակել է մեկից ավելի Կենտրոնական մարմիններ, նա նշում է այն Կենտրոնական մարմինը, որին կարող է հասցեագրվել ցանկացած հաղորդագրություն՝ այդ Պետության շրջանակներում համապատասխան Կենտրոնական մարմին փոխանցելու համար:

Հոդված 7

1. Երեխաներին պաշտպանելու համար և Կոնվենցիայի այլ նպատակներին հասնելու համար Կենտրոնական մարմինները համագործակցում են միմյանց հետ և իրենց Պետություններում զարգացնում են իրավասու մարմինների միջև համագործակցությունը:

2. Նրանք անմիջականորեն ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները, որպեսզի.

ա) տեղեկատվություն տրամադրեն իրենց Պետությունների՝ որդեգրմանը վերաբերող օրենքների վերաբերյալ և ընդհանուր այլ տեղեկատվություն, ինչպիսիք են վիճակագրությունը և ստանդարտ ձևերը.

բ) միմյանց տեղյակ պահեն Կոնվենցիայի գործողության մասին և հնարավորության սահմաններում վերացնեն դրա կիրառման բոլոր խոչընդոտները:

Հոդված 8

Կենտրոնական մարմիններն անմիջականորեն կամ պետական մարմինների միջոցով ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները որդեգրման կապակցությամբ՝ չարդարացված ֆինանսական կամ այլ օգուտի կանխարգելման և Կոնվենցիայի նպատակներին հակասող ցանկացած պրակտիկայի կանխման համար:

Հոդված 9

Կենտրոնական մարմիններն անմիջականորեն կամ պետական մարմինների կամ իրենց Պետությունում հավատարմագրված այլ մարմինների միջոցով ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները, մասնավորապես, այն բանի համար, որ՝

ա) տեղեկատվություն հավաքեն, պահպանեն և փոխանակեն երեխայի վիճակի և որդեգրող ապագա ծնողների մասին՝ այնքանով, որքանով դա անհրաժեշտ է որդեգրումը ձևակերպելու համար.

բ) հեշտացնեն, պահպանեն և արագացնեն որդեգրման ընթացակարգը.

գ) աջակցեն իրենց Պետություններում որդեգրման հարցերով խորհրդատվության և որդեգրման իրականացումից հետո ծառայությունների զարգացմանը.

դ) միմյանց տրամադրեն օտարերկրյա որդեգրման փորձի վերաբերյալ ընդհանուր գնահատող զեկույցները.

ե) պատասխանեն, որքանով դա թույլատրված է իրենց Պետության օրենքով, այլ Կենտրոնական կամ պետական մարմինների կողմից որդեգրման բնագավառում որոշակի իրավիճակի մասին տեղեկատվություն տրամադրելու հիմնավորված խնդրանքներին:

Հոդված 10

Հավատարմագրումը կարող է տրամադրվել միայն այն կազմակերպություններին, որոնք կարող են իրավասու և պատշաճ կերպով իրագործել իրենց առջև դրված խնդիրները:

Հոդված 11

Հավատարմագրված կազմակերպությունը՝

- ա) հետապնդում է միայն շահույթ չհետապնդող նպատակներ՝ համաձայն այնպիսի պայմանների և այնպիսի շրջանակներում, որոնք սահմանվել են հավատարմագրող Պետության իրավասու մարմինների կողմից.
- բ) կառավարվում և համալրվում է բարոյական չափանիշների, օտարերկրյա որդեգրման բնագավառում ուսուցման և աշխատանքային փորձի առումով բարձր որակավորում ունեցող անձնակազմի կողմից, և
- գ) իր կազմի, գործունեության և ֆինանսական դրության առումով ենթակա է վերահսկողության այդ Պետության իրավասու մարմինների կողմից:

Հոդված 12

Մի Պայմանավորվող պետությունում հավատարմագրված մարմինը կարող է գործել մեկ այլ Պայմանավորվող պետությունում միայն երկու Պետությունների իրավասու մարմինների թույլտվության դեպքում:

Հոդված 13

Կենտրոնական մարմինների անվանումները և, որտեղ դա անհրաժեշտ է, դրանց գործառույթների շրջանակը, ինչպես նաև հավատարմագրված կազմակերպությունների անվանումներն ու հասցեները յուրաքանչյուր Պայմանավորվող պետության կողմից հաղորդվում են Միջազգային մասնավոր իրավունքի Հաագայի կոնֆերանսի մշտական բյուրոյին:

Գ Լ ՈՒ Խ IV

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Հոդված 14

Պայմանավորվող պետությունում մշտապես բնակվող անձինք, որոնք ցանկանում են որդեգրել մեկ այլ Պայմանավորվող պետությունում մշտապես բնակվող երեխայի, դիմում են իրենց մշտական բնակության վայրի Պետության Կենտրոնական մարմնին:

Հոդված 15

1. Եթե ընդունող Պետության Կենտրոնական մարմինը համոզվում է, որ դիմողները որդեգրելու իրավունք ունեն և կարող են դա անել, նախապատրաստում է զեկույց նրանց անձի, որդեգրում իրականացնելու իրավունքների և պիտանիության, կենսագրական տվյալների, բժշկական քարտի և ընտանիքի պատմության, սոցիալական շրջապատի, որդեգրման պատճառների, օտարերկրյա որդեգրում իրականացնելու ունակության, ինչպես նաև այն երեխաների բնութագրի վերաբերյալ, որոնց համար նրանք պետք է հոգ տանեն:

2. Նա զեկույցը փոխանցում է ծագման Պետության Կենտրոնական մարմնին:

Հոդված 16

1. Եթե ծագման Պետության Կենտրոնական մարմինը համոզված է, որ երեխան կարող է որդեգրվել, ապա նա.

ա) նախապատրաստում է զեկույց, որը ներառում է տեղեկատվություն նրա անձի, որդեգրվելու հնարավորության, կենսագրական տվյալների մասին, սոցիալական շրջապատի, ընտանիքի պատմության, բժշկական քարտի մասին՝ ներառյալ երեխայի ընտանիքի վերաբերյալ այդ տեղեկությունները և երեխայի ցանկացած հատուկ պահանջները.

բ) պատշաճ կերպով հաշվի է առնում երեխայի դաստիարակությունը և նրա էթնիկական, կրոնական և մշակութային կապերն ու շրջապատը.

զ) համոզվում է, որ համաձայնությունը ստացվել է 4-րդ հոդվածի համաձայն, և
դ) որոշում է, մասնավորապես՝ երեխային և որդեգրում իրականացնող ապագա ծնողներին վերաբերող զեկույցի հիման վրա, բխում է արդյոք նախատեսված տեղափոխումը երեխայի լավագույն շահերից:

2. Նա ընդունող Պետության Կենտրոնական մարմինն է փոխանցում երեխայի մասին իր զեկույցը, ապացույցը, որ ստացվել է անհրաժեշտ համաձայնությունը և տեղափոխման վերաբերյալ իր ընդունած որոշման հիմքերը՝ չբացահայտելով մոր և հոր ինքնության գաղտնիքը, եթե ծագման Պետությունում դրանք չպետք է բացահայտվեն:

Հոդված 17

Ծագման Պետությունում ցանկացած որոշում այն մասին, որ երեխան պետք է վստահված լինի որդեգրող ապագա ծնողներին, կարող է կայացվել միայն այն դեպքում, եթե.

ա) այդ Պետության Կենտրոնական մարմինը համոզվել է որդեգրող ապագա ծնողների համաձայնության մեջ.

բ) ընդունող Պետության Կենտրոնական մարմինը հավանություն է տվել այդպիսի որոշմանը, որտեղ նման հավանություն տալը պահանջվում է այդ Պետության օրենքով կամ ծագման Պետության Կենտրոնական մարմնի կողմից.

գ) երկու Պետությունների Կենտրոնական մարմինները համաձայնել են իրականացնել որդեգրումը, և

դ) 5-րդ հոդվածի համաձայն՝ որոշվել է, որ ենթադրյալ որդեգրող ծնողները որդեգրման իրավունք ունեն և կարող են դա անել, և որ երեխային թույլատրվում է կամ թույլատրվելու է մեկնել ընդունող Պետություն և մշտապես բնակվել այնտեղ:

Հոդված 18

Երկու Պետությունների Կենտրոնական մարմինները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ քայլերը, որպեսզի երեխայի համար ստանան ծագման Պետությունից հեռանալու և ընդունող Պետությունում մշտապես բնակվելու և այնտեղ մեկնելու թույլտվություն:

Հոդված 19

1. Ընդունող Պետություն երեխայի տեղափոխումը կարող է իրականացվել միայն 17-րդ հոդվածի պահանջների իրականացման դեպքում:

2. Երկու Պետությունների Կենտրոնական մարմիններն ապահովում են, որ նման տեղափոխումն իրականացվի անվտանգ և պատշաճ իրադրությունում և, եթե հնարավոր է, որդեգրած կամ որդեգրող ապագա ծնողների ուղեկցությամբ:

3. Եթե երեխայի փոխանցումը չի կայացել, ապա 15-րդ և 16-րդ հոդվածներում նշված զեկույցները վերադարձվում են դրանք նախապատրաստած մարմիններին:

Հոդված 20

Կենտրոնական մարմինները միմյանց տեղեկացված են պահում որդեգրման գործընթացի և դրա իրականացման համար ձեռնարկված միջոցների մասին, ինչպես նաև տեղավորման գործընթացի մասին, եթե պահանջվում է փորձաշրջան:

Հոդված 21

1. Եթե որդեգրումը տեղի է ունենում երեխային ընդունող Պետությանը փոխանցելուց հետո, և այդ Պետության Կենտրոնական մարմինը պարզում է, որ որդեգրող ապագա ծնողների մոտ երեխայի շարունակական գտնվելը չի համապատասխանում երեխայի լավագույն շահերին, նման Կենտրոնական մարմինն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում երեխայի պաշտպանության համար, մասնավորապես.

ա) երեխային վերցնում է որդեգրող ապագա ծնողների մոտից և կազմակերպում է երեխայի նկատմամբ ժամանակավոր խնամք,

բ) ծագման Պետության Կենտրոնական մարմնի հետ խորհրդակցելով՝ անհապաղ կազմակերպում է երեխայի նոր տեղավորում՝ նրա որդեգրման նպատակով, կամ, եթե դա նպատակահարմար չէ, կազմակերպում է այլընտրանքային երկարաժամկետ խնամակալություն. որդեգրում տեղի չի կարող ունենալ, քանի դեռ ծագման

Պետության Կենտրոնական մարմինը պատշաճ կերպով չի տեղեկացվել նոր՝ որդեգրող ապագա ծնողների մասին.

գ) որպես ծայրահեղ միջոց՝ կազմակերպում է երեխայի վերադարձը, եթե դա բխում է նրա շահերից:

2. Կախված երեխայի տարիքից և հասունության աստիճանից՝ նրա հետ անց են կացնում խորհրդատվություն, որտեղ դա անհրաժեշտ է, և ստանում են նրա համաձայնությունը սույն հոդվածի համաձայն ձեռնարկվող միջոցների վերաբերյալ:

Հոդված 22

1. Սույն գլխի համաձայն՝ Կենտրոնական մարմնի գործառույթները կարող են իրականացվել պետական մարմինների կամ III գլխի համաձայն հավատարմագրված կազմակերպությունների կողմից՝ այն ծավալով, որը թույլատրվում է նրա Պետության օրենքներով:

2. Ցանկացած Պայմանավորվող պետություն Կոնվենցիայի ավանդապահին կարող է հայտնել, որ 15-21-րդ հոդվածներով Կենտրոնական մարմնի գործառույթները նման Պետությունում կարող են իրականացվել օրենքով թույլատրված ծավալով և, այդ Պետության իրավասու մարմինների վերահսկողությամբ, այն կազմակերպությունների կամ անձանց կողմից, որոնք՝

ա) համապատասխանում են ազնվության, մասնագիտական իրավասության, փորձի և այդ Պետության առաջ հաշվետու լինելու պահանջներին, և

բ) օժտված են բարոյական հատկանիշներով, կրթությամբ կամ օտարերկրյա որդեգրման բնագավառում աշխատելու համար փորձով:

3. Պայմանավորվող պետությունը, որը 2-րդ կետով նախատեսված հայտարարություն է անում, Միջազգային մասնավոր իրավունքի Հաագայի կոնֆերանսի մշտական բյուրոյին տեղեկացնում է այդ կազմակերպությունների և անձանց անունների և հասցեների մասին:

4. Ցանկացած Պայմանավորվող պետություն Կոնվենցիայի ավանդապահին կարող է հայտնել, որ իր տարածքում մշտապես բնակվող երեխաների որդեգրումը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե Կենտրոնական մարմինների գործառույթները կատարվել են 1-ին կետին համապատասխան:

5. Չնայած 2-րդ կետի համաձայն արված ցանկացած հայտարարությանը՝ 15-րդ և 16-րդ հոդվածներով նախատեսված զեկույցները բոլոր դեպքերում նախապատրաստվում են Կենտրոնական մարմնի կամ, 1-ին կետի համաձայն, այլ մարմինների կամ կազմակերպությունների ղեկավարությամբ:

Գ Լ ՈՒ Խ V

ՈՐԴԵԳՐՄԱՆ ՃԱՆԱՀՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հոդված 23

1. Որդեգրումը, որը ձևակերպվել է այն Պետության իրավասու մարմնի կողմից, որտեղ որդեգրումը կատարվում է սույն Կոնվենցիայի համաձայն, ճանաչվում է մյուս Պայմանավորվող պետությունների օրենքով: Հաստատված վկայականը հստակեցնում է, թե 17-րդ հոդվածի «գ» ենթակետով նախատեսված համաձայնությունը երբ և ում կողմից է տրվել:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու ժամանակ Կոնվենցիայի ավանդապահին ծանուցում է այն մարմնի և մարմինների ինքնության և գործառույթների մասին, որոնք այդ Պետությունում վկայականներ տալու իրավունք ունեն: Նա ավանդապահին ծանուցում է նաև այդ մարմինների անվանման մեջ տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին:

Հոդված 24

Պայմանավորվող պետությունում որդեգրման ճանաչումը կարող է մերժվել միայն այն ժամանակ, եթե, հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը, որդեգրումն ակնհայտորեն հակասում է նրա պետական քաղաքականությանը:

Հոդված 25

Ցանկացած Պայմանավորվող պետություն կարող է Կոնվենցիայի ավանդապահին հայտնել, որ ինքը

պարտավորված չի լինելու սույն Կոնվենցիայի դրույթներով՝ 39-րդ հոդվածի 2-րդ կետի հիման վրա կնքված համաձայնագրի համաձայն իրականացված որդեգրումների ճանաչման առումով:

Հոդված 26

1. Որդեգրման ճանաչումը ներառում է.

ա) երեխայի և նրան որդեգրած ծնողների միջև ծնող-երեխա իրավական հարաբերությունների ճանաչումը.

բ) երեխայի համար որդեգիր ծնողների պատասխանատվության ճանաչումը.

գ) երեխայի և նրա մոր ու հոր միջև նախկինում գոյություն ունեցող իրավահարաբերությունների դադարեցման ճանաչումը, եթե որդեգրումն այդպիսի հետևանքներ է առաջացնում այն Պայմանավորվող պետությունում, որտեղ այն կատարվել է:

2. Այն դեպքում, երբ որդեգրումը հանգեցնում է ծնողների և երեխայի միջև նախկինում գոյություն ունեցող ծնող-երեխա իրավահարաբերությունների դադարեցման, ընդունող Պետությունում և ցանկացած այլ Պայմանավորվող պետությունում, որտեղ որդեգրումը ճանաչվում է, երեխան օգտվում է նույնպիսի իրավունքներից, որոնք ծագում են յուրաքանչյուր նման Պետությունում տվյալ հետևանքներն ունեցող որդեգրումից:

3. Նախորդ կետերը չեն խոչընդոտում որդեգրումը ճանաչած Պայմանավորվող պետությունում գործող՝ երեխայի համար առավել բարենպաստ ցանկացած դրույթի կիրառմանը:

Հոդված 27

1. Այնտեղ, որտեղ ծագման Պետությունում թույլատրված որդեգրումը ծնողների և երեխայի միջև նախկինում գոյություն ունեցող ծնող-երեխա իրավահարաբերությունների դադարեցման հետևանք չի առաջացնում, այն կարող է ընդունող Պետությունում, որը, Կոնվենցիայի համաձայն, ճանաչում է որդեգրումը, այդպիսի հետևանքներ առաջացնող որդեգրման վերածվել այն դեպքում՝

ա) եթե դա թույլատրում է ընդունող Պետության օրենքը, և

բ) եթե նման որդեգրման նպատակների համար ստացվել է կամ ստացվելու է 4-րդ հոդվածի «գ» և «դ» ենթակետերում նշված համաձայնությունը:

2. 23-րդ հոդվածը կիրառվում է որդեգրման հետևանքների փոփոխման մասին որոշման նկատմամբ:

Գ Լ ՈՒ Խ VI

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 28

Կոնվենցիան չի շոշափում ծագման Պետության ցանկացած օրենք, որը պահանջում է, որ այդ Պետության սահմաններում մշտապես բնակվող երեխայի որդեգրումը տեղի ունենա այդ Պետությունում, կամ որն արգելում է երեխայի տեղավորումը ընդունող Պետությունում կամ նրա փոխանցումը ընդունող Պետություն՝ նախքան որդեգրումը:

Հոդված 29

Որդեգրող ապագա ծնողների և երեխայի ծնողների կամ ցանկացած այլ անձի միջև, որը հոգ է տանում երեխայի մասին, չպետք է շփումներ լինեն, քանի դեռ չեն կատարվել 4-րդ հոդվածի «ա»-«գ» ենթակետերի և 5-րդ հոդվածի «ա» ենթակետի պահանջները, եթե միայն որդեգրումը տեղի չի ունենում ընտանիքի շրջանակներում, կամ եթե այդպիսի շփումը համապատասխանում է ծագման Պետության իրավասու մարմնի կողմից սահմանված պայմաններին:

Հոդված 30

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմիններն ապահովում են, որ պահպանվի երեխայի ծագման վերաբերյալ իրենց ունեցած տեղեկատվությունը, մասնավորապես՝ նրա ծնողների ինքնությանը վերաբերող տեղեկատվությունը, ինչպես նաև բժշկական քարտը:

2. Նրանք ապահովում են, որ նման տեղեկատվությունը համապատասխան հսկողության ներքո մատչելի լինի

երեխայի կամ նրա ներկայացուցիչների համար, որքանով դա թույլատրված է նման Պետության օրենքով:

Հոդված 31

Չխախտելով 30-րդ հոդվածի դրույթները՝ անձնական բնույթի տվյալները, որոնք հավաքվել կամ փոխանցվել են ըստ Կոնվենցիայի, հատկապես 15-16-րդ հոդվածներում նշված տվյալները օգտագործվում են միայն այն նպատակներով, որոնց համար դրանք հավաքվել կամ փոխանցվել են:

Հոդված 32

1. Ոչ ոք չպետք է ստանա չարդարացված ֆինանսական կամ այլ օգուտ օտարերկրյա որդեգրմանը վերաբերող գործունեությունից:

2. Կարող են սահմանվել կամ վճարվել միայն ծախսերը և ծախքերը, ներառյալ որդեգրման գործընթացում ներգրավված անձանց խելամիտ մասնագիտական հոնորարները:

3. Որդեգրման գործընթացում ներգրավված մարմինների ղեկավարները, վարչարարները և ծառայողները չեն ստանում մատուցված ծառայությունների որակից անհիմն բարձր վարձատրություն:

Հոդված 33

Իրավասու մարմինը, որը բացահայտում է, որ Կոնվենցիայի որևէ դրույթ չի պահպանվում, կամ լուրջ վտանգ գոյություն ունի, որ այն չի պահպանվելու, այդ մասին անհապաղ տեղեկացնում է իր Պետության Կենտրոնական մարմնին: Այդ Կենտրոնական մարմինը պատասխանատու է համարվում համապատասխան միջոցների ձեռնարկումն ապահովելու համար:

Հոդված 34

Փաստաթղթի ստացման Պետության իրավասու մարմնի պահանջի դեպքում ներկայացվում է բնօրինակին համապատասխանող՝ դրա վավերացված թարգմանությունը: Եթե այլ բան նախատեսված չէ, նման թարգմանության համար ծախսերը հոգում են որդեգրող ապագա ծնողները:

Հոդված 35

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները որդեգրման գործընթացում պետք է գործեն արագ:

Հոդված 36

Այն Պետության նկատմամբ, որը որդեգրման վերաբերյալ ունի իրավական երկու կամ ավելի համակարգեր, որոնք կիրառվում են տարբեր տարածքային միավորումներում՝

ա) այդ Պետությունում մշտական բնակության վայրին կատարված ցանկացած հղում մեկնաբանվում է որպես այդ պետության տարածքային միավորում մշտական բնակության վայրին վերաբերող.

բ) այդ Պետության օրենքին կատարված ցանկացած հղում մեկնաբանվում է որպես համապատասխան տարածքային միավորի գործող օրենքին վերաբերող.

գ) իրավասու մարմիններին կամ պետական մարմիններին կատարված ցանկացած հղում մեկնաբանվում է որպես այն նույն մարմիններին վերաբերող, որոնք լիազորված են գործել համապատասխան տարածքային միավորում.

դ) այդ Պետության հավատարմագրված կազմակերպություններին կատարված ցանկացած հղում մեկնաբանվում է որպես համապատասխան տարածքային միավորում հավատարմագրված կազմակերպություններին վերաբերող:

Հոդված 37

Այն Պետության վերաբերյալ, որը որդեգրման առնչությամբ ունի իրավական երկու կամ ավելի համակարգեր, որոնք կիրառվում են տարբեր անձանց հարաբերությունների նկատմամբ, այդ Պետության իրավունքին կատարված

ցանկացած հղում մեկնաբանվում է որպես այն իրավական համակարգին վերաբերող, որը նշված է այդ Պետության օրենքով:

Հոդված 38

Պետությունը, որի շրջանակներում տարբեր տարածքային միավորներ ունեն որդեգրմանը վերաբերող իրենց սեփական իրավական նորմերը, պարտավոր չէ կիրառել Կոնվենցիայի դրույթները, եթե իրավունքի միասնական համակարգով Պետությունը պարտավոր չէ դա անել:

Հոդված 39

1. Կոնվենցիան չի ազդում այն միջազգային փաստաթղթերի վրա, որոնց մասնակից են Պայմանավորվող պետությունները, և որոնք դրույթներ են պարունակում Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ, եթե նման փաստաթղթերին մասնակից Պետությունների կողմից հակառակ հայտարարություն չի արվել:

2. Ցանկացած Պայմանավորվող պետություն կարող է մեկ կամ ավելի մյուս Պայմանավորվող պետությունների հետ համաձայնագրեր կնքել՝ իրենց փոխադարձ հարաբերություններում Կոնվենցիան լավագույնս կիրառելու նպատակով: Այդ համաձայնագրերը կարող են շեղվել միայն 14-16-րդ և 18-21-րդ հոդվածների դրույթներից: Այդպիսի համաձայնագիր կնքած Պետությունները դրա պատճենը փոխանցում են Կոնվենցիայի ավանդապահին:

Հոդված 40

Կոնվենցիայի վերաբերյալ որևէ վերապահում չի թույլատրվում:

Հոդված 41

Կոնվենցիան կիրառվում է յուրաքանչյուր դեպքում, երբ 14-րդ հոդվածով նախատեսված հայտարարությունը ստացվել է ընդունող Պետությունում, և ծագման Պետությունում Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո:

Հոդված 42

Միջազգային մասնավոր իրավունքի Հաագայի Կոնֆերանսի Գլխավոր քարտուղարը պարբերաբար հրավիրում է Հատուկ հանձնաժողով՝ Կոնվենցիայի գործնական կիրառումը քննարկելու համար:

Գ Լ ՈՒ Խ VII

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 43

1. Կոնվենցիան բաց է այն Պետությունների ստորագրման համար, որոնք Միջազգային մասնավոր իրավունքի Հաագայի կոնֆերանսի տասնյոթերորդ նստաշրջանի ժամանակ եղել են նրա անդամներ, և այլ Պետությունների համար, որոնք մասնակցել են այդ նստաշրջանին:

2. Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման, և վավերագրերը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Նիդեռլանդների Թագավորության արտաքին գործերի նախարարությանը, որը Կոնվենցիայի ավանդապահն է:

Հոդված 44

1. Ցանկացած այլ պետություն կարող է միանալ Կոնվենցիային 46-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն դրա ուժի մեջ մտնելուց հետո:

2. Միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում ավանդապահին:

3. Նման միանալն ուժի մեջ է միայն միացող պետության և այն Պայմանավորվող պետությունների միջև հարաբերություններում, որոնք նրա միանալու դեմ առարկություններ չեն արել 48-րդ հոդվածի «բ» ենթակետում հիշատակված ծանուցումը ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում: Նման առարկություն Պետությունների

կողմից կարող է արվել նաև միանալուց հետո՝ Կոնվենցիան վավերացնելու, ընդունելու կամ հաստատելու ժամանակ: Ավանդապահը ծանուցվում է ցանկացած նման առարկության մասին:

Հոդված 45

1. Եթե Պետությունն ունի մեկ կամ ավելի տարածքային միավորներ, որոնցում Կոնվենցիայով կարգավորվող հարցերի նկատմամբ կիրառվում են իրավունքի տարբեր համակարգեր, ապա ստորագրման, վավերացման, ընդունման, հաստատման տալու կամ միանալու ժամանակ նա կարող է հայտարարել, որ սույն Կոնվենցիան տարածվում է իր բոլոր տարածքային միավորների կամ միայն մեկի կամ դրանցից մի քանիսի վրա, և կարող է փոփոխել այդ հայտարարությունը՝ ցանկացած ժամանակ ներկայացնելով այլ հայտարարություն:

2. Ցանկացած նման հայտարարության մասին ծանուցվում է ավանդապահը, և հստակ նշվում են այն տարածքային միավորները, որոնց նկատմամբ կիրառելի է Կոնվենցիան:

3. Եթե Պետությունը սույն հոդվածի համաձայն հայտարարություն չի անում, ապա Կոնվենցիան տարածվում է այդ Պետության բոլոր տարածքային միավորների վրա:

Հոդված 46

1. Կոնվենցիան ուժի մեջ է մտնում 43-րդ հոդվածում նշված՝ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին երրորդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո՝ երեք ամիսը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

2. Հետագայում Կոնվենցիան ուժի մեջ է մտնում.

ա) յուրաքանչյուր Պետության համար, որը վավերացնում, ընդունում կամ հաստատում է այն կամ միանում է դրան հետագայում՝ վավերագիրը, ընդունելու, հաստատելու կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո՝ երեք ամիսը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը.

բ) տարածքային միավորի համար, որի վրա, 45-րդ հոդվածի համաձայն, տարածվում է Կոնվենցիան՝ այդ հոդվածով նախատեսված ծանուցումից հետո՝ երեք ամիսը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 47

1. Կոնվենցիային մասնակից ցանկացած Պետություն կարող է այն չեղյալ հայտարարել ավանդապահին հասցեագրված գրավոր ծանուցման միջոցով:

2. Չեղյալ հայտարարելն ուժի մեջ է մտնում ծանուցումն ավանդապահի ստանալուց հետո՝ տասներկու ամիսը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը: Երբ ծանուցման մեջ նշվում է չեղյալ հայտարարման ուժի մեջ մտնելու ավելի երկար ժամկետ, ապա չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում ծանուցումն ավանդապահի ստանալուց հետո՝ այդ ավելի երկար ժամկետը լրանալուց հետո:

Հոդված 48

Ավանդապահը ծանուցում է Միջազգային մասնավոր իրավունքի Հաագայի կոնֆերանսի անդամ Պետություններին, մյուս Պետություններին, որոնք մասնակցել են տասնյոթերորդ նստաշրջանին, և այն Պետություններին, որոնք միացել են 44-րդ հոդվածի համաձայն.

ա) 43-րդ հոդվածում նշված ստորագրումների, վավերացումների, ընդունումների և հաստատումների մասին.

բ) 44-րդ հոդվածում նշված միացումների և միանալու հետ կապված առարկությունների մասին.

գ) 46-րդ հոդվածին համապատասխան՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվա և ամիս-ամսաթվի մասին.

դ) 22-րդ, 23-րդ, 25-րդ և 45-րդ հոդվածներում նշված հայտարարությունների և նշանակումների մասին.

ե) 39-րդ հոդվածում նշված համաձայնագրերի մասին.

զ) 47-րդ հոդվածում նշված չեղյալ հայտարարումների մասին:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճորեն լիազորված լինելով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարվել է Հաագայում, 1993 թ. մայիսի 29-ին, մեկ բնօրինակով, անգլերեն և ֆրանսերեն. ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են, որոնք ի պահ են հանձնվում Նիդեռլանդների Թագավորության կառավարության արխիվին: Դրանց հաստատված պատճենները դիվանագիտական ուղիներով ուղարկվում են Միջազգային մասնավոր իրավունքի Հաագայի կոնֆերանսի յուրաքանչյուր անդամ Պետությանը տասնյոթերորդ նստաշրջանի օրը և յուրաքանչյուր այլ Պետության, որը մասնակցել է այդ նստաշրջանին:

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2007 թվականի հունիսի 1-ից: